ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2017 թվականի **թիվ 178** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ դիմումի մասին

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ դիմումի ձեւը.

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ դիմումի լրացման, ինչպես նաեւ այդպիսի դիմումի մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգը.

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ դիմումի ներկայացմանը, գրանցմանը եւ գրանցումը մերժելուն առնչվող մաքսային գործառնությունները կատարելու կարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի դեկտեմբերի 19-ի
թիվ 178 որոշմամբ

ՁԵՎ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ դիմումի

<table>
<tr><td colspan="6">ԴԻՄՈՒՄ
Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ</td></tr>
<tr><td colspan="4">1. Հայտարարատու</td><td colspan="2">A</td></tr>
<tr><td colspan="4" rowspan="3">2. Ապրանքի նկարագրությունը</td><td colspan="2">3. Ապրանքի ծածկագիրը</td></tr>
<tr><td colspan="2">4. Նախորդող փաստաթուղթը</td></tr>
<tr><td>5. Գործառնությունների արժեքը</td><td>5ա. Մաքսային արժեքը</td></tr>
<tr><td colspan="4">6. Գործառնությունների նկարագրությունը</td><td colspan="2">7. Ներկայացված փաստաթղթերը</td></tr>
<tr><td colspan="4">8. Վճարների հաշվարկումը</td><td colspan="2" rowspan="3">9. Հաշվարկի մանրամասները</td></tr>
<tr><td>Տեսակը</td><td>Հաշվեգրման հիմքը</td><td>Դրույքաչափը</td><td>Գումարը</td><td>ՎԵ (Վճարման եղանակը)</td></tr>
<tr><td colspan="4" rowspan="2"></td><td rowspan="2"></td></tr>
<tr><td colspan="2">10. Ա. Ա. Հ.-ն, պաշտոնը, ամսաթիվը</td></tr>
</table>

_____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի դեկտեմբերի 19-ի
թիվ 178 որոշմամբ

ԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ դիմումը լրացնելու, ինչպես նաեւ այդպիսի դիմումի մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու

I. Ընդհանուր դրույթները

1. Սույն կարգը սահմանում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ դիմումը (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, դիմում) լրացնելու, ինչպես նաեւ այդպիսի դիմումի մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու կանոնները:

2. Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումը լրացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանվող կառուցվածքին համապատասխան:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումը լրացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 178 որոշմամբ հաստատված ձեւով:

3. Դիմումի մեջ նշվում են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանք հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող մեկ տրանսպորտային միջոցի նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ տեղեկությունները:

4. Դիմումը լրացնելիս կիրառվում են Միության նորմատիվ-տեղեկատվական տեղեկատվության միասնական համակարգի ռեսուրսների կազմի մեջ մտնող տեղեկատուներն ու դասակարգիչները, ինչպես նաեւ Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) օրենսդրությանը համապատասխան ձեւավորվող եւ կիրառման ենթակա՝ մաքսային նպատակներով օգտագործվող տեղեկատուներն ու դասակարգիչները:

5. Սույն կարգի նպատակներով վանդակ է համարվում էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի կառուցվածքի վավերապայմանը (վավերապայմանները) կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի ձեւի կառուցվածքային միավորը, որը կարող է ընդգրկել ենթաբաժիններ, այունակներ, բաղադրիչներ: Սույն կարգին համապատասխան՝ մեկ վանդակում նշվում են ըստ մեկ հատկանիշի միավորված տեղեկությունները:

6. Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումը կարող է պարունակել դիմումն ավտոմատացված կերպով մշակելու համար անհրաժեշտ տեխնիկական բնույթի տեղեկություններ: Այդպիսի տեղեկությունները նշվում են դիմումը լրացնող անձի կողմից կամ ձեւավորվում են տեղեկատվական համակարգի կողմից: Նշված տեղեկությունների կազմը սահմանվում է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի կառուցվածքում:

Տեխնիկական բնույթի տեղեկությունները չեն արտացոլվում էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի թղթային պատճենը տպելիս:

7. Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումը կազմվում է A4 ձեւաչափի թղթի թերթերի վրա՝ 2 օրինակից: Մեկ օրինակը նախատեսված է մաքսային մարմնի համար, իսկ մյուսը՝ դիմումը ներկայացնող անձի համար:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմում ներկայացնելիս ներկայացվում է դրա էլեկտրոնային պատճենը:

8. Եթե թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի վանդակներում տեղեկություններ նշելու համար բավարար տեղ չկա, ապա այդ տեղեկությունները նշվում են դիմումի դարձերեսին կամ դիմումին լրացուցիչ կից ներկայացվող A4 ձեւաչափի թղթի թերթերի վրա, որոնք թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի անբաժանելի մասն են (այսուհետ՝ լրացում): Ընդ որում, դիմումի համապատասխան վանդակում կատարվում է «Տե՛ս դարձերեսին» կամ «Տե՛ս լրացումը» գրառումը: Լրացման բոլոր թերթերը պետք է համարակալված լինեն:

Լրացման յուրաքանչյուր թերթի վերեւի աջ անկյունում կատարվում է «Դիմումի լրացում թիվ _____ _____ թերթի վրա:» գրառումը:

Դիմումի կամ լրացման դարձերեսն օգտագործելիս նշվում են դիմումի վանդակի համարը եւ այն տեղեկությունները, որոնց համար դիմումի վանդակում բավարար տեղ չկա:

Լրացման յուրաքանչյուր թերթի ներքեւի աջ անկյունը վավերացվում է դիմումը լրացրած անձի ստորագրությամբ եւ այդ անձի կնիքի դրոշմվածքով, եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, այդ անձը կնիք ունի:

II. Դիմումի վանդակների լրացման կարգը

9. Դիմումը լրացվում է այն ներկայացնող անձի կողմից՝ բացառությամբ «Ա» վանդակի, որը լրացվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից կամ ձեւավորվում է մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի կողմից:

10. «Ա» վանդակը լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում է ըստ հետեւյալ սխեմայի ձեւավորված՝ դիմումի գրանցման համարը՝

$$\frac{XXXXXXXX}{1} / \frac{XXXXXX}{2} / \frac{XXXXXXX}{3} / \frac{XX}{4}$$

որտեղ՝

1-ին բաղադրիչը՝ դիմումը գրանցող մաքսային մարմնի ծածկագիրն է՝ անդամ պետություններում կիրառվող՝ մաքսային մարմինների դասակարգիչներին համապատասխան.

2-րդ բաղադրիչը՝ դիմումի գրանցման ամսաթիվն է՝ ՕՕԱԱՏՏ ձեւաչափով (օր, ամիս, օրացուցային տարվա վերջին երկու թվերը).

3-րդ բաղադրիչը՝ դիմումը գրանցած մաքսային մարմնի կողմից ըստ դիմումների գրանցամատյանի տրվող՝ դիմումի հերթական համարն է (համարակալումը սկսվում է 0000001 թվից՝ յուրաքանչյուր օրացուցային տարի).

4-րդ բաղադրիչը՝ «01» թիվն է:

Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմում ներկայացնելու դեպքում դիմումի գրանցման համարի մասին տեղեկությունները ձեւավորվում են էլեկտրոնային փաստաթղթի տեսքով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի վանդակում դիմումի գրանցման համարի բոլոր բաղադրիչները նշվում են «/» բաժանման նշանով, բաղադրիչների միջեւ բացատներ չեն թույլատրվում:

11. 1-ին վանդակը՝ «Հայտարարատու» լրացվում է հետեւյալ կարգով՝

Սույն կարգի 22-25-րդ կետերին համապատասխան՝ վանդակում նշվում են տեղեկություններ այն անձի մասին, որը հանդես է եկել որպես «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն) մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ որպես միջազգային փոխադրումներ իրականացնող այն տրանսպորտային միջոցի հայտարարատու, որի նկատմամբ կատարվել են դիմումի 6-րդ վանդակում նշված գործառնությունները:

12. 2-րդ վանդակը՝ «Ապրանքի նկարագրությունը» լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ որպես միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց օգտագործվող այն ապրանքի մասին տեղեկությունները, որի նկատմամբ կատարվել են մաքսատուրքերը, հարկերը հաշվարկելու եւ (կամ) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) համապատասխան՝ ապրանքը մեկ տասանիշ ծածկագրին դասելու համար անհրաժեշտ գործառնությունները:

Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի մեջ տեղեկությունները նշվում են դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում: Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմում ներկայացնելիս տեղեկությունները նշվում են հետեւյալ համարների ներքո. համար 1՝

ապրանքի անվանումը (ապրանքի առեւտրային, կոմերցիոն կամ այլ ավանդական անվանում),

այն ապրանքի նկարագրությունը, որը ներառում է ապրանքի որակական եւ քանակական կազմը, արտադրողի անվանումը, ապրանքային նշանների մասին տեղեկությունները, մակնիշը, մոդելը, այլ տեխնիկական եւ կոմերցիոն բնութագրեր, բացթողման (արտադրման) օրը (ստորակետով տրոհված, յուրաքանչյուր դիրքը՝ նոր տողից). համար 2՝

ապրանքի բնութագրերը կամ պարամետրերը, որոնք արտահայտված են մաքսային եւ այլ վճարումների հաշվարկման ժամանակ օգտագործվող՝ հիմնական կամ լրացուցիչ չափման միավորից տարբերվող չափման միավորներով.

չափման միավորի պայմանական նշագիրը՝ չափման միավորների դասակարգչին համապատասխան, կամ ապրանքի բնութագրի կամ պարամետրի

պայմանական նշագիրը՝ մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման ժամանակ օգտագործվող լրացուցիչ բնութագրերի եւ պարամետրերի դասակարգչին համապատասխան.

չափման միավորի ծածկագիրը՝ չափման միավորների դասակարգչին համապատասխան, կամ բնութագրի կամ պարամետրի ծածկագիրը՝ մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման ժամանակ օգտագործվող լրացուցիչ բնութագրերի եւ պարամետրերի դասակարգչին համապատասխան:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի մեջ այդ տեղեկությունները նշվում են «/» բաժանման նշանով:

13. 3-րդ վանդակը՝ «Ապրանքի ծածկագիրը» լրացվում է հետեւյալ կարգով՝

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան՝ վանդակում առանց բացատների նշվում է ապրանքի տասանիշ ծածկագիրը, որը նշված է ապրանքների հայտարարագրի 33-րդ վանդակի առաջին ենթաբաժնում, որին համապատասխան՝ որպես միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց օգտագործվող ապրանքը ձեւակերպված է «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով:

14. 4-րդ վանդակը՝ «Նախորդող փաստաթուղթը» լրացվում է հետեւյալ կարգով՝

Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի մեջ՝ «/» բաժանման նշանով նշվում են ապրանքների հայտարարագրի գրանցման համարը եւ այդ ապրանքի հերթական համարը ապրանքի այն հայտարարագրի 32-րդ վանդակում, որին համապատասխան, որպես միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց օգտագործվող ապրանքը ձեւակերպվել է «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով:

15. 5-րդ վանդակը՝ «Գործառնության արժեքը» լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 186-րդ հոդվածին համապատասխան սահմանված՝ դիմումի 6-րդ վանդակում նշված գործառնությունների արժեքը՝ արտահայտված այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին ներկայացվում է դիմումը:

Եթե գործառնությունների արժեքը որոշելիս անհրաժեշտ է կատարել արտարժույթի վերահաշվարկ այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին ներկայացվում է դիմումը, ապա այդ վերահաշվարկը կատարվում է այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող (որոշվող)՝ ապրանքի այն հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող արժույթով, որին համապատասխան, որպես միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց օգտագործվող ապրանքը ձեւակերպվել է «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով:

Գործառնությունների արժեքի ստացված արժեքը կլորացվում է մաթեմատիկական կանոններով՝ ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ մինչեւ ամբողջ թիվը:

16. 5ա վանդակը՝ «Մաքսային արժեքը» լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակը լրացվում է այն դեպքում, երբ որպես միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց օգտագործվող ապրանքի նկատմամբ, որի նկատմամբ Միության մաքսային տարածքից դուրս կատարվել են գործառնություններ, կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի հատուկ դրույքաչափեր:

Վանդակում նշվում է Օրենսգրքի 5-րդ գլխին համապատասխան սահմանված՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցի արժեքն այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին ներկայացվում է դիմումը՝ այնպես, ինչպես միջազգային փոխադրումներ իրականացնող այդ տրանսպորտային միջոցը կձեւակերպվեր «ներքին սպառման

համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ Օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

Եթե մաքսային արժեքը որոշելիս անհրաժեշտ է կատարել արտարժույթի վերահաշվարկ այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին ներկայացվում է դիմումը, ապա այդ վերահաշվարկը կատարվում է այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող (որոշվող)՝ ապրանքների այն հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող արժույթով, որին համապատասխան, որպես միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց օգտագործվող ապրանքը ձեւակերպվել է «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով:

Մաքսային արժեքի ստացված արժեքը կլորացվում է մաթեմատիկական կանոններով՝ ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ մինչեւ ամբողջ թիվը:

17. 6-րդ վանդակը՝ «Գործառնությունների նկարագրությունը» լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում են Միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանք հանդիսացող միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցի նկատմամբ կատարված գործառնությունների մասին տեղեկությունները, ինչպես նաեւ դրանց կատարման ամսաթիվը (ժամանակահատվածը):

18. 7-րդ վանդակը՝ «Ներկայացված փաստաթղթերը» լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում են դիմումի 6-րդ վանդակում նշված գործառնությունների արժեքը հաստատող փաստաթղթերի մասին տեղեկությունները:

Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի մեջ՝ «/» բաժանման նշանով նշվում են՝

փաստաթղթի ծածկագիրը՝ մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան.

փաստաթղթի համարը եւ ամսաթիվը՝ օօ.աա.տտտտ (օր/ամիս/օրացուցային տարի) ձեւաչափով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի մեջ յուրաքանչյուր փաստաթղթի մասին տեղեկությունները նշվում են առանձին տողով:

19. 8-րդ վանդակը՝ «Վճարումների հաշվարկումը» լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում են Օրենսգրքի 186-րդ հոդվածին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման մասին տեղեկությունները՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 257 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգով սահմանված՝ ապրանքների հայտարարագրի 47-րդ վանդակի լրացման կանոններին համապատասխան:

20. 9-րդ վանդակը՝ «Հաշվարկի մանրամասները» լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում են այն ապրանքի համար փաստացի վճարված (բռնագանձված) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասին տեղեկությունները, որի մասով դիմումի մեջ հաշվարկված են ներմուծման մաքսատուրքերը, հարկերը:

Մաքսատուրքերի, հարկերի գումարները մաթեմատիկական կանոններով կլորացվում են հետեւյալ ճշտությամբ՝

Հայաստանի Հանրապետությունում եւ Ղազախստանի Հանրապետությունում՝ մինչեւ ամբողջ թիվ.

Բելառուսի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում՝ ստորակետից հետո մինչեւ 2 նիշ:

Մաքսատուրքերի, հարկերի վճարման (բռնագանձման) մասին տեղեկությունները նշվում են վճարման յուրաքանչյուր տեսակի համար առանձին՝ դրանց վճարումը (բռնագանձումը) հաստատող (արտացոլող) փաստաթղթերի կտրվածքով: Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմում լրացնելիս տեղեկությունները նշվում են դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում: Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումը լրացնելիս այդ տեղեկությունները նշվում են առանձին տողերով, բոլոր բաղադրիչները միմյանցից տրոհվում են «-» նշանով, բաղադրիչների միջեւ բացատներ չեն թույլատրվում:

Մաքսատուրքերի, հարկերի վճարման (բռնագանձման) մասին տեղեկությունները ձեւավորվում են հետեւյալ սխեմայով՝

1-ին բաղադրիչը՝ վճարման տեսակի ծածկագիրը՝ այն հարկերի, վճարների եւ այլ վճարումների տեսակների դասակարգչին համապատասխան, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին.

2-րդ բաղադրիչը՝ կատարված (բռնագանձված) վճարման գումարը.

3-րդ բաղադրիչը՝ վճարումը կատարելու (բռնագանձելու) արժույթի թվային ծածկագիրը՝ արժույթների դասակարգչին համապատասխան.

4-րդ բաղադրիչը՝ վճարման կատարումը (բռնագանձումը) հաստատող փաստաթղթի համարը.

5-րդ բաղադրիչը՝ Հայաստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում՝ վճարման կատարումը (բռնագանձումը) հաստատող

փաստաթղթի ամսաթիվը՝ օօ.աա.տտտտ (օր/ամիս/օրացուցային տարի) ձեւաչափով, Բելառուսի Հանրապետությունում՝ վճարման (բռնագանձման) ամսաթիվը (վճարումը կատարելու պարտականությունը կատարելու ամսաթիվը)՝ օօ.աա.տտտտ (օր/ամիս/օրացուցային տարի) ձեւաչափով՝ ըստ վճարման կատարումը (բռնագանձումը) հաստատող փաստաթղթի.

6-րդ բաղադրիչը՝ վճարումը կատարելու եղանակի ծածկագիրը՝ այն մաքսային եւ այլ վճարումների կատարման եղանակների դասակարգչին համապատասխան, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին.

7-րդ բաղադրիչը՝ Բելառուսի Հանրապետությունում եւ Ղազախստանի Հանրապետությունում տեղեկություններ այն անձի մասին, որը վճարել է մաքսատուրքերի, հարկերի գումարները կամ ում դրամական միջոցների (դրամի), այլ գույքի կամ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականության կատարման տրամադրված ապահովման հաշվին գանձվել են մաքսատուրքերի, հարկերի գումարները: Ընդ որում, այդպիսի տեղեկություններ են՝

Բելառուսի Հանրապետությունում՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ) (բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի) կամ ֆիզիկական անձի նույնականացման համարը (առկայության դեպքում).

Ղազախստանի Հանրապետությունում՝ բիզնես-նույնականացման համարը (ԲՆՀ)՝ կազմակերպության (մասնաճյուղի եւ ներկայացուցչության) ու համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար, կամ անհատական նույնականացման համարը (ԱՆՀ)՝ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անձնական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար:

Եթե որպես մաքսատուրքերի, հարկերի գումարները վճարած անձ կամ որպես անձ, որի դրամական միջոցների (դրամի), այլ գույքի կամ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականության կատարման տրամադրված ապահովման հաշվին գանձվել են մաքսատուրքերի, հարկերի

գումարները, հանդես է գալիս օտարերկրյա անձ, ինչպես նաեւ անձ, որը գրանցված է այլ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, քան այն անդամ պետությունը, որի մաքսային մարմին ներկայացվում է դիմումը, ապա 7-րդ բաղադրիչը չի լրացվում:

Հայաստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում 7-րդ վանդակը չի լրացվում:

21. 10-րդ վանդակը՝ «Ա. Ա. Հ.-ն, պաշտոնը, ամսաթիվը» լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում են դիմումը լրացրած անձի ազգանունը, անվան սկզբնատառերը եւ պաշտոնը, ինչպես նաեւ դիմումի լրացման ամսաթիվը՝ օօ.աա.տտտտ (օր/ամիս/օրացուցային տարի) ձեւաչափով:

Դիմումի մեջ նշված տեղեկությունները թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի մեջ հավաստվում են վանդակում դիմումը լրացրած անձի ստորագրությամբ եւ այդ անձի կնիքի դրոշմվածքով, եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, այդ անձը կնիք ունի:

22. Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի մեջ ՝ 1-ին վանդակում առանձին տողերով նշվում են՝

1) օտարերկրյա կազմակերպության մասին տեղեկությունները.

լրիվ կամ կրճատ (կրճատված) անվանումը,

գտնվելու վայրը (սույն կարգի 23-րդ կետին համապատասխան).

նույնականացման մաքսային համարը (ՆՄՀ)՝ Ղազախստանի Հանրապետությունում կիրառվող՝ նույնականացման մաքսային համարի ձեւավորման դասակարգչին համապատասխան (Ղազախստանի Հանրապետության համար).

2) օտարերկրյա ֆիզիկական անձի մասին տեղեկությունները՝

ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում).

բնակության վայրը (սույն կարգի 23-րդ կետին համապատասխան).

անձը հաստատող փաստաթուղթը (սույն կարգի 24-րդ կետին համապատասխան).

նույնականացման մաքսային համարը (ՆՄՀ)՝ Ղազախստանի Հանրապետությունում կիրառվող՝ նույնականացման մաքսային համարի ձեւավորման դասակարգչին համապատասխան (Ղազախստանի Հանրապետության համար).

հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ) կամ այդպիսի համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (Հայաստանի Հանրապետության համար), նույնականացման համարը (առկայության դեպքում) (մյուս անդամ պետությունների համար).

3) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ստեղծված՝ իրավաբանական անձի կամ իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպության մասին տեղեկությունները՝

լրիվ կամ կրճատ (կրճատված) անվանումը.

գտնվելու վայրը (սույն կարգի 23-րդ կետին համապատասխան).

հարկային համարը (սույն կարգի 25-րդ կետին համապատասխան).

նույնականացման մաքսային համարը (ՆՄՀ)՝ Ղազախստանի Հանրապետությունում կիրառվող՝ նույնականացման մաքսային համարի ձեւավորման դասակարգչին համապատասխան (Ղազախստանի Հանրապետության համար).

ձեռնարկությունների եւ կազմակերպությունների համահանրապետական դասակարգչի (ՁԿՀԴ) ծածկագիրը (Ղրղզստանի Հանրապետության համար).

պետական գրանցման հիմնական համարը (ՊԳՀՀ) (Ռուսաստանի Դաշնության համար).

4) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի մասին տեղեկությունները՝

ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում).

բնակության վայրը (սույն կարգի 23-րդ կետին համապատասխան).

հարկային համարը (սույն կարգի 25-րդ կետին համապատասխան).

նույնականացման մաքսային համարը (ՆՄՀ)՝ Ղազախստանի Հանրապետությունում կիրառվող՝ նույնականացման մաքսային համարի ձեւավորման դասակարգչին համապատասխան (Ղազախստանի Հանրապետության համար).

ձեռնարկությունների եւ կազմակերպությունների համահանրապետական դասակարգչի (ՁԿՀԴ) ծածկագիրը (Ղրղզստանի Հանրապետության համար).

պետական գրանցման հիմնական համարը (ՊԳՀՀ) (Ռուսաստանի Դաշնության համար).

5) անդամ պետությունում մշտական բնակության վայր ունեցող եւ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան որպես անհատ ձեռնարկատեր չգրանցված ֆիզիկական անձի մասին տեղեկությունները՝

ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում).

բնակության վայրը (սույն կարգի 23-րդ կետին համապատասխան).

անձը հաստատող փաստաթուղթը (սույն կարգի 24-րդ կետին համապատասխան).

հարկային համարը (բացի Բելառուսի Հանրապետությունից) (սույն կարգի 25-րդ կետին համապատասխան).

նույնականացման մաքսային համարը (ՆՄՀ) Ղազախստանի Հանրապետությունում կիրառվող՝ նույնականացման մաքսային համարի ձեւավորման դասակարգչին համապատասխան (Ղազախստանի Հանրապետության համար).

հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ) կամ այդպիսի համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (Հայաստանի Հանրապետության համար), նույնականացման համարը (առկայության դեպքում) (մյուս անդամ պետությունների համար):

23. Բնակության կամ գտնվելու վայրի մասին տեղեկությունները նշվում են էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի մեջ՝ վանդակում՝ առանձին տողով, ստորակետով տրոհված, եւ ներառում են՝

1) երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան.

2) վարչատարածքային միավորը (տարածաշրջանը, մարզը, շրջանը եւ այլն) (Ղրղզստանի Հանրապետության համար՝ Ղրղզստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի մասին տեղեկություններ նշելիս՝ վարչատարածքային միավորի ծածկագիրը՝ վարչատարածքային եւ տարածքային միավորների օբյեկտների նշագրերի համակարգի պետական դասակարգչին համապատասխան (ՎՏՄՆՀ ՄԴ)).

3) բնակավայրը.

4) փողոցը (բուլվար, պողոտա եւ այլն).

5) շենքի համարը.

6) մասնաշենքի (շինության) համարը.

7) բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը:

24. Անձը հաստատող փաստաթղթի մասին տեղեկությունները նշվում են էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի

տեսքով դիմումի մեջ՝ վանդակում՝ առանձին տողով, ստորակետով տրոհված, եւ ներառում են՝

1) այն երկրի ծածկագիրը, որի լիազորված մարմնի կողմից տրվել է անձը հաստատող փաստաթուղթը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան.

2) փաստաթղթի անվանումը (Ռուսաստանի Դաշնության համար).

3) փաստաթղթի սերիան (առկայության դեպքում) եւ համարը.

4) փաստաթղթի տրամադրման ամսաթիվը՝ օօ.աա.տտտտ (օր/ամիս/օրացուցային տարի) ձեւաչափով:

25. Անձի հարկային համար է համարվում՝

Հայաստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),

Բելառուսի Հանրապետությունում՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ),

Ղազախստանի Հանրապետությունում՝ բիզնես-նույնականացման համարը (ԲՆՀ)՝ կազմակերպության (մասնաճյուղի եւ ներկայացուցչության) ու համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար, կամ անհատական նույնականացման համարը (ԱՆՀ)՝ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անձնական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար,

Ղրղզստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի նույնականացման հարկային համարը (ՀՎՆՀՀ)՝ իրավաբանական անձի եւ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի համար՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, կամ անձնական նույնականացման համարը (ԱՆՀ)՝ Ղրղզստանի Հանրապետության տարածքում առեւտրային գործունեություն իրականացնող եւ որպես անհատ ձեռնարկատեր չգրանցված ֆիզիկական անձի համար,

Ռուսաստանի Դաշնությունում՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ), իսկ իրավաբանական անձի համար՝ նաեւ հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ) (իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման համար նշվում է ՀԿՊԾ, որը տրվել է՝ ըստ առանձնացված ստորաբաժանման գտնվելու վայրի): Հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ) նշվում է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի մեջ՝ դիմումի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում, իսկ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումի մեջ՝ «/» բաժանման նշանով:

III. Դիմումի մեջ փոփոխությունների (լրացումների) կատարում

26. Դիմումի մեջ նշված տեղեկությունները ենթակա են փոփոխման (լրացման) այդ տեղեկությունների անհավաստիությունը հայտնաբերելիս:

27. Դիմումի մեջ փոփոխությունները (լրացումները) կատարվում են նոր դիմում լրացնելու միջոցով:

Ընդ որում, նոր դիմումի համապատասխան վանդակ են տեղափոխվում դիմումի մեջ նախկինում նշված բոլոր տեղեկությունները՝ հաշվի առնելով կատարվող փոփոխությունները (լրացումները):

28. Դիմումի մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելիս նոր դիմումի «Ա» վանդակը լրացվում է՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները:

Նոր դիմումի «Ա» վանդակում նշվում է նոր դիմումի գրանցման համարը, որը ձեւավորվել է ըստ հետեւյալ սխեմայի՝

$$\frac{XXXXXXXX/XXXXXX/XXXXXX}{1}/\frac{XX}{2}$$

որտեղ՝

1-ին բաղադրիչը՝ այն դիմումի գրանցման համարի առաջին 3 բաղադրիչները, որում կատարվում են փոփոխությունները (լրացումները),

2-րդ բաղադրիչը՝ կատարված փոփոխությունների (լրացումների) հերթական համարը՝ սկսած «02» համարից:

Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով նոր դիմում ներկայացնելու դեպքում այդ դիմումի գրանցման համարի մասին տեղեկությունները ձեւավորվում են էլեկտրոնային փաստաթղթի տեսքով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով նոր դիմումի «Ա» վանդակում նոր դիմումի գրանցման համարի բոլոր բաղադրիչները նշվում են «/» բաժանման նշանով, բաղադրիչների միջեւ բացատներ չեն թույլատրվում:

29. Դիմումի մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելիս նոր դիմումի 7-րդ վանդակը լրացվում է՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները:

Նոր դիմումի 7-րդ վանդակ տեղափոխվում են այն դիմումի 7-րդ վանդակի տեղեկությունները, որում կատարվում են փոփոխություններ (լրացումներ): Նոր դիմումի 7-րդ վանդակում լրացուցիչ նշվում են դիմումի մեջ կատարվող փոփոխությունները (լրացումները) հաստատող փաստաթղթի մասին տեղեկությունները:

30. Հայաստանի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում դիմումի մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելիս նոր դիմումի 9-րդ վանդակ են տեղափոխվում այն դիմումի 9-րդ վանդակից բոլոր տեղեկությունները, որում կատարվում են փոփոխությունները (լրացումները): Եթե դիմումի մեջ նշված տեղեկություններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու պատճառով նոր դիմումի 9-րդ վանդակում նշված՝ կատարված (բռնագանձված) վճարման գումարը գերազանցում է նոր դիմումի 8-րդ վանդակում նշված այդպիսի վճարման կատարման ենթակա գումարը, ապա վճարման ենթակա գումարը գերազանցող՝ կատարված (բռնագանձված) վճարման գումարի մասին տեղեկությունները նշվում են «-» նշանով այն վճարման փաստաթղթերի կտրվածքով, որոնց համապատասխան կատարվել (բռնագանձվել) է վճարումը:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի դեկտեմբերի 19-ի
թիվ 178 որոշմամբ

ԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ դիմումը ներկայացնելու, գրանցելու եւ գրանցումը մերժելու հետ կապված մաքսային գործառնությունների կատարման

1. Սույն կարգը սահմանում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ դիմումը (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, դիմում) ներկայացնելու, գրանցելու եւ գրանցումը մերժելու հետ կապված մաքսային գործառնությունների կատարման հաջորդականությունը:

2. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ ժամանակավոր ներմուծված ապրանք) նկատմամբ գործառնություններ կատարելու դեպքում այդ ժամանակավոր ներմուծվող ապրանքի

հայտարարատուն դիմում է ներկայացնում (էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով) ժամանակավոր ներմուծված ապրանքը «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպած մաքսային մարմին կամ դիմումը գրանցելու իրավասություն ունեցող՝ Միության անդամ պետության այլ լիազորված մարմին, որն ապրանքը ձեւակերպել է «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով:

Դիմումի հետ միասին մաքսային մարմին ներկայացվում են կատարված գործառնությունների արժեքը հաստատող փաստաթղթերը (թղթային կրիչով փաստաթղթերի պատճենները, էլեկտրոնային փաստաթղթերը եւ (կամ) թղթային կրիչով փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները):

Դիմումը ներկայացնելիս անձի փաստացի ներկայությունը մաքսային մարմնում եւ (կամ) ժամանակավոր ներմուծված ապրանքի ներկայացումը չի պահանջվում:

3. Այն մաքսային մարմնի պաշտոնատար անձը, որին ներկայացվել է դիմումը, հնարավորինս կարճ ժամկետներում, սակայն այդ դիմումը ներկայացնելու պահից հետո մաքսային մարմնի 1 ժամ աշխատաժամից ոչ ուշ՝

արձանագրում է դիմումը ներկայացնելու ամսաթիվն ու ժամը՝ մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ,

մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ ձեւավորում եւ ուղարկում է դիմումը ներկայացրած անձին էլեկտրոնային փաստաթուղթ, որը տեղեկատվություն է պարունակում մաքսային մարմին դիմումի ներկայացումը արձանագրելու ամսաթվի եւ ժամի վերաբերյալ, կամ դիմումի դարձերեսին նշում է դիմումի ստացման ամսաթիվն ու ժամը եւ վավերացնում այդ տեղեկությունները մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստարագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով, եթե Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ այդ անձը կնիք ունի (եթե դիմումը ներկայացվել է թղթային կրիչով):

4. Դիմումը ներկայացնելու ամսաթիվն ու ժամն արձանագրելուց հետո այն մաքսային մարմնի պաշտոնատար անձը, որին դիմումը ներկայացվել է, հնարավորինս կարճ ժամկետներում, սակայն դրա ներկայացնելն արձանագրելու պահից հետո մաքսային մարմնի 1 ժամ աշխատաժամից ոչ ուշ, քննում է այդ դիմումը եւ որոշում է ընդունում այդ դիմումը գրանցելու կամ դրա գրանցումը մերժելու մասին:

Եթե մաքսային մարմինն ստացել է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումը, երբ մաքսային մարմնի աշխատանքային ժամի ավարտին մնացել է մեկ ժամից պակաս, ապա այդ դիմումը գրանցելու կամ գրանցումը մերժելու մասին որոշումն ընդունվում է այդ մաքսային մարմնի աշխատանքային ժամը սկսելու պահից հետո մեկ ժամից ոչ ուշ:

5. Մաքսային մարմնի պաշտոնատար անձը դիմումի գրանցումը մերժելու մասին որոշում է ընդունում հետեւյալ հիմքերով՝

1) դիմումը ներկայացվել է դիմումը գրանցելու իրավասություն չունեցող մաքսային մարմին.

2) դիմումը ներկայացվել է չլիազորված մարմնի կողմից եւ (կամ) պատշաճորեն ստորագրված կամ վավերացված չէ.

3) թղթային կրիչով փաստաթղթի տեսքով դիմումը կազմված է ոչ ըստ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 178 որոշմամբ հաստատված ձեւի.

4) դիմումը չի պարունակում նշելու ենթակա տեղեկություններ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 178 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս գտնվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ հանդիսացող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ գործառնություններ կատարելու վերաբերյալ դիմումը

լրացնելու, ինչպես նաեւ այդ դիմումի մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգին (այսուհետ՝ Դիմումը լրացնելու կարգ) համապատասխան.

5) էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի կառուցվածքը եւ ձեւաչափը չեն համապատասխանում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանվող կառուցվածքին եւ ձեւաչափին.

6) չեն վճարվել ներմուծման մաքսատուրքերը, հարկերը՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 186-րդ հոդվածին համապատասխան հաշվարկված չափով:

6. Դիմումը գրանցելու մասին որոշում ընդունելու դեպքում մաքսային մարմնի պաշտոնատար անձը սույն կարգի 4-րդ կետով նախատեսված ժամկետում՝

1) մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ գրանցում է դիմումը՝ Դիմումը լրացնելու կարգին համապատասխան գրանցման համար տրամադրելու միջոցով.

2) մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ ձեւավորում եւ ուղարկում է դիմումը ներկայացրած անձին դիմումի գրանցման համարի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող էլեկտրոնային փաստաթուղթը (եթե դիմումը ներկայացվել է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով).

3) դիմումի «Ա» վանդակում նշում է դիմումի գրանցման համարը եւ այն վավերացնում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով (եթե դիմումը ներկայացվել է թղթային կրիչով).

4) վերադարձնում է գրանցված դիմումի մեկ օրինակը դիմումը ներկայացրած անձին (եթե դիմումը ներկայացվել է թղթային կրիչով): Եթե համապատասխան որոշումն ընդունելու օրվան հաջորդող մաքսային մարմնի

1 աշխատանքային օրվա ընթացքում դիմում ներկայացրած անձը դիմումն ստանալու համար չի ներկայացել, ապա մաքսային մարմինն ուղարկում է այդ դիմումը պատվիրված փոստային առաքանիով՝ հանձնելու մասին ծանուցմամբ, կամ փոխանցում է դիմումն ստանալու փաստի հաստատումն ապահովող այլ եղանակով:

7. Դիմումի գրանցումը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում մաքսային մարմնի պաշտոնատար անձը սույն կարգի 4-րդ կետով նախատեսված ժամկետում՝

1) եթե դիմումը ներկայացվել է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով՝

մաքսային մարմնի տեղեկատվական համակարգում ձեւավորում է դիմումի գրանցումը մերժելու մասին տեղեկատվություն՝ նշելով դիմումի գրանցումը մերժելու պատճառները, դիմումի գրանցման մերժումը ձեւակերպելու ամսաթիվն ու ժամը,

օգտագործելով մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը՝ ձեւավորում եւ դիմումը ներկայացրած անձին է ուղարկում դիմումի գրանցումը մերժելու մասին տեղեկատվություն պարունակող էլեկտրոնային փաստաթուղթ՝ նշելով մերժելու պատճառները, դիմումի գրանցման մերժումը ձեւակերպելու ամսաթիվն ու ժամը,

2) եթե դիմումը ներկայացվել է թղթային կրիչով՝

դիմումի դարձերեսին կատարում է «Գրանցումը մերժված է» նշումը՝ նշելով մերժման պատճառները, գրանցման մերժումը ձեւակերպելու ամսաթիվն ու ժամը եւ վավերացնում այդ նշումը ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով,

վերադարձնում է դիմումի մեկ օրինակը դիմումը ներկայացրած անձին՝ գրանցումը մերժելու մասին նշումով: Եթե համապատասխան որոշումն ընդունելու օրվան հաջորդող՝ մաքսային մարմնի մեկ աշխատանքային օրվա ընթացքում

դիմումը ներկայացրած անձը դիմումն ստանալու համար չի ներկայացել, ապա մաքսային մարմինն ուղարկում է այդ դիմումը պատվիրված փոստային առաքանիով՝ հանձնելու մասին ծանուցմամբ, կամ փոխանցում է այդ դիմումն ստանալու փաստի հաստատումն ապահովող այլ եղանակով: